

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2015 թվականի հունիսի 6-ին Նոր Խարբերդի գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային խում:

Նախագահում էր համայնքի ղեկավար Կ. Կակոյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Գ. Աբրահամյանը:

Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Ասատրյանը, ալիագանու անդամներ, համայնքի ղեկավարի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի, երաժշտական և հանրակրթական դպրոցի տնօրեններն ու աշխատակիցները, համայնքի բնակիչներ:

ԼՄԵՑԻՆ- Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի ղեկավար Կ. Կակոյանի հաշվետվությունը 2015 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՅ, ոյր

2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Նոր Խարբերդի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 240 դիմում, համայնքի ղեկավարի և ալիագանու անդամների կողմից ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները բննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ալիագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 3800 տեղեկանք, ստացել 40-ից ավելի պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք բննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սահմանադրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման առուները, փողոցները: Ծարպթը երկու անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափազանց, սահմանների ճշտորման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և համայնքի բնակիչներին է բաժանվել պարարտանյութեր:

2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական նկատմունքները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա/ հողի հարկ՝ 1581.788 հազար դրամ.

բ/ գույքահարկ՝ 6121.932 հազար դրամ.

գ/ տնդական տուրք՝ 1288.0 հազար դրամ.

դ/ ոչ հարկային եկամուտներ՝ 3498.106 հազար դրամ:

Համայնքում իրականացվել են մի շարք միջոցառումներ.

Հանդիսավորությանը նշվել են Բանակի, Կանանց, Աշխատանքի, Հայրթանակի և խաղաղության, Հանրապետության, Սահմանադրության օրերը:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 1710.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն:

Հողարկավորության նպաստ՝ 1600.0 հազար դրամ:

Համայնքում նախադարձական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 14200.0 հազար դրամ:

Երաժշտական դպրոցին 8600.0 հազար դրամ:

Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է՝ 600.0 հազար դրամ:

Համայնքի հիմնախնդիրներից է գյուղամիջյան ճանապարհների բարելավումը, խմելու և ոռոգման ջրի ներքին ցանցերի վերանորոգումը, նոր թաղամասերում էլեկտրական ենթակայանների տնդադրումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

